

ԱՐՐԱՀԱՄ ԵՐԵՎԱՆՑՈՒ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ»

Պատմ. գիտ. դոկտոր Լ. Հ. ԲԱՔԱՅԱՆ

Աբրահամ Երեանցու «Պատմութիւն պատերազմացն» երկը առաջին անգամ տպագրվել է 1938 թ. Երևանում¹: Մեկ տարի անց, 1939 թ. լույս է տեսնում գրքի ռուսերեն թարգմանությունը²: Ե՛վ հայերեն, և՛ ռուսերեն գրքերի պատասխանատու խմբագիրն է պրոֆ. Ս. Վ. Տեր-Ավետիսյանը: Ռուսերեն թարգմանության նախաբանը, ծանոթագրությունները և ցանկերը կազմել է Ասլան Շահնազարյանը:

Տարիներ անց՝ 1977 թ., Վենետիկում հրատարակվեց Աբրահամ Երեանցու՝ Ս. Ղազարի մատենադարանում պահվող ինքնագիր ձեռագիրը³ (№ 2717), որը հեղինակի կողմից խորագրված է եղել «Պատմութիւն թագաւորի Պարսից» կամ «Պատմութիւն Պարսոյ»: Նրանում պահպանվել է հեղինակի թողած ինքնագիր մի փոքր հիշատակարան, ուր կարևոր կենսագրական տվյալներ կան հեղինակի և «Պատմութիւնը» գրելու շարժառիթների մասին: Այնտեղ կարդում ենք. «Վերջ եղավ զայս պատմութիւնիս բանն, այլ ոչ գիտեմ քան սիս յառայվել. այս էր որ տեսի աշաց իմոյ գրեցի եւ յիշեցի, թվ. ՌՃՀԳ (1724) ումն մինչ ի 1183 (1734): Շուրջ եկի ի մէջ օսմանցու, ի մէջ պարսոյ, տեսի եւ գրեցի, եւ Երեանցի Յօհանէս որդի Աբրահամս, որ զայս յիշեցի այս պատմութիւնս: Օվ աստուածայէր քրիստոնէս, կարդայ զայս պատմութիւնս, ողորմիս ասէ իմ հօր Յօհանին, իմ մայր Մարամին եւ քույր Դարդա խաթունին»: Այնուհետև շարունակության մեջ հիշում է մյուս քոռն և վեց եղբայրների անուններն ու վերջացնում հետևյալ տողերով. «Զայս անունքս որ յիշեցի, ի ձեռն օսմանցու մարտիրոսացան, թէ մայր, թէ հայր, թէ եխպար: Ով ասէ ողորմիս, վարձն Քրիստոսէ առցէ. ամէն» (էջ 70բ):

Վերը մեր կողմից ընդգծված տողում Երեանցին, ինչպես տեսնում ենք, հավաստում է, որ նկարագրված իրադարձությունների ականատեսն է: Պատմության ընթացքում էլ հաճախ կրկնում է. «այսպէս որ ասացանք եւ յիշեցանք», «այսպէս որ ասացի եւ լսեցի» և կամ «...այլոց խօսելովն»: Այս էլ գրել է ռուսաց տալու համար, թե շարադրանքի որ հատվածները գրի է առել ուրիշների պատմելով, կամ ուրիշներին լսելով: Երեանցու, իբրև պատմագրի, առանձնահատկություններից է այն, որ նա ամենայն մանրամասնությամբ տալիս է իրադարձությունների ժամանակագրությունը տարիներով, ամիսներով,

¹ Աբրահամ Երեանցի, Պատմութիւն պատերազմացն 1721—1736 թ., պատ. խմբագիր, պրոֆ. Ս. Վ. Տեր-Ավետիսյան, Երևան, 1938 (գիրքն ունի ներածություն և ցանկեր):

² Абраам Ереванци, История войн 1721—1736 гг, ответ. редактор д-р С. В. Тер-Аветисян, предисловие, примечания и указатель составил Ас. Шахназарян, Ереван, 1939.

³ Աբրահամ Երեանցի, Պատմութիւն պատերազմացն 1721—1736 թուի, Ցառաջաբան, բնագիր, խմբագիր օրինակ եւ ծանոթութիւններ, հրատարակեց հ. Սահակ Զեմճեմյան, Վենետիկ, 1977 (այսուհետև՝ Երեանցի):

օրերով, անգամ ժամերով և դրանք ավելի են արժեքավորում նրա երկն իբրև սկզբնաղբյուր: Հրատարակիչ Ս. Ծեմճեմյանը ճիշտ է նկատում, որ Աբրահամն իր «Պատմությունը» գրել է XVIII դարի առաջին կեսի երևանյան գավառաբարբառով, և որ հեղինակը հետամուտ չի եղել «խնամելու լեզուն և բացատրությունները, այլ ուղած է ավանդել մեզի լոկ պատմությունը, ինչպես որ տեսած է և լսած»⁴:

Ս. Ծեմճեմյանը Երևանցու ինքնագիր ձեռագրի հետ միասին հրատարակել է նաև, ինչպես ինքն է դրում, «Մխիթար արքայի աշակերտներեն հ. Մատթեոս Նվդոկացի Գարադաշյանի (1691—1772) կողմից խմբագրած բնագիրը»: Այդ խմբագրությունն անհրաժեշտ է եղել, քանի որ «Աբրահամ Երևանցիի պատմությունը կը ներկայանա մեզի սաղմնային վիճակի մեջ, գրված առանց ոճի և ընթերցողի հաճելին դառնալու մտահոգության»⁵:

Գարադաշյանը Երևանցու «Պատմությունը» ամբողջությամբ վերաշարադրել է, կենդանացրել, ոգի և կենսունակություն տվել, մատչելի դարձրել ընթերցողներին: Որոշ տեղերում համառոտել է ինքնաղբյուր բնագիրը, առանձին հատվածներում կատարել լրացումներ և մութ ու խլիճ տեղերին տվել է յուրովի մեկնաբանություններ⁶:

Այդ լրացումներն ու մեկնաբանությունները ոչ միայն ամբողջացնում են Երևանցու բնագիրը, այլև իրենց պարունակած բովանդակությամբ նոր իմաստ են տալիս առանձին իրադարձություններին ու երևույթներին, ավելի որոշակի բացահայտում դրանց պատճառները:

Շատ օրինակներից բերենք միայն մի քանիսը: Այսպես. եթե Երևանցին Աֆյան հարստության անկման պատճառը համարում է աֆղանների ապստամբությունը, ապա Գարադաշյանը, հենց սկզբից, բացահայտում է նրա անկման ներքին ու արտաքին պատճառները: Նշելով, որ 1721 թ. աֆղան Մահմուդ սուլթանը գրավել է Սպահանը (նրա մոտ Շուշ—Լ. Բ.), նա գրում է. «...ի ժամանակի, յորժամ սասանեալ, դըրդեալ, խռովեալ ծփիւր աշխարհն Պարսից, եւ իշխանք գաւառացն ի հերձիլ լայնածաւալ միապետութեան նորա՝ հակառակ միմեանց յարուցեալ տագնապիւն եւ զաշխարհն ամենայն հարուածովք սրոյ եւ գերութեան յաւեր ածել ձգէին տունս Հայոց, որ ըստ երեւելի մասին ընդ պարսից տէրութեան գրաւեալ կայ... Զի ոչ եթէ միայն առ ի ներքուստ վրդովմանց աշխարհին ի յնդանի գաւառակից պետաց հակառակ միմեանց յարուցելոց զհարուածս սրոյ եւ սովու կրէր, այլ եւ ի հազարացոց սահմանակից պետութենէ անտի եւ ի լակզի թաթարացն յարձակելոց զանհամար անձանց՝ արանց և կանանց, երիտասարդաց եւ կուսից, մանկանց եւ տղայոց առհասարակ՝ զշարաշար գերութիւն եւ զկոտորումն ընդունէր»⁷:

Երևանցին, նկարագրելով Աբդուլլա փաշայի կողմից Երևանի գրավումը, բավարարվել է նշելով միայն, որ օսմանցիներն էջմիածինը շեն գրավել, որովհետև Ստամբուլից հրաման են ստացել թե «Յէջմիածնու հեզ բան շունէք»⁸,

⁴ Նույն տեղում, Յառաջաբան, էջ 8:

⁵ Նույն տեղում (հոգվածում բերված քաղվածքները կատարել ենք Երևանցու ձեռագրի ինքնագրից, որի էջերը կնշենք տողամիջում):

⁶ Երևանցի, խմբագրված բնագիրը, էջ 9:

⁷ Նույն տեղում, էջ 91:

⁸ Նույն տեղում, էջ 25:

առանց պատճառաբանելու թե ինչո՞ւ: Այդ արեւ է խմբագիր Գարագաշյանը: Նա գրում է. «Զի ի ժամանակին, յորում լինէր զօրացն օսմանցւոց ի Հայաստան միւի, ոմն բարեպաշտ մեծատուն ի հայոց ազգէ, Սեղբոս անուանեալ, որ իրաց պիտոյից արքունի պաղատանն ծառայելով, շնորհս գտեալ էր եւ էր ինքն անուանի քան զամենայն մեծամեծս հայոց, որք ի Կոստանդնուպօլիս են, բարեխօս եղեալ էր վասն էջմիածնին, որպեսզի առ խնամս ազգիս հայոց եւ առ օգուտն աւրօմնի հրաման տացէ սուլտանն եւ պատուիրեսցէ փաշային՝ ի սուրբ էջմիածնին անխայել, եւ ոչ թոյլ տալ զօրաց իւրոց զայն սուրբ տեղին ասպատակել»⁹:

Եթե Նրեանցին օսմանցիների կողմից Կարբիի գրավման կապակցութեամբ բավարարվել է նշելով, որ Նրեանի Միհրաբի խանը մերժել է օգնել կարեւոր ներքին, պահանջել է դիմադրել թշնամուն մինչև կաթողիկոսի վերադարձը շահի մոտից, ապա Գարագաշյանն ատելութեամբ է գրում խանի այդ վարքագծի մասին: Ըստ նրա, խանի պատճառաբանությունը «անօգուտ անմտութիւն էր»․ «...զսոյն զայս պատճառս,— գրել է նա,— յուսադիր լինելոյ նոցա զնելն ամպարիշտ իշխանին՝ անօգուտ անմտութիւն էր: Ի կորուստ անձանց նոցա վարէր զնոսա թշուառական, զի էր օտարազգի եւ անհավատ, եւ ոչ ինչ փոյթ էր նմա գերութիւնն եւ կոտորումն քրիստոնեայ ազգին մերոյ: Վասն զի եթէ հարազատ հաւատարիմ խնամածու իցէր, զիստ մարթ էր նմա զնոսա այսպէս իբրեւ զոշարի ի սպանդ վարել. քանզի զի՞նչ համեմատութիւն էր անպարիսպ, անխրամ եւ անզօր գիւղաքաղաքի միոյ առ այնչափ բազմութիւն զօրացն, որք պաշարեցին զնա...»¹⁰:

Նման լրացումները շատ են, սակայն բավարարվենք այսքանով:

Նրեանցու «Պատմութիւնը» չափազանց արժեքավոր ու խիստ կարևոր աղբյուր է XVIII դարի 15-ամյա ժամանակահատվածի (1721—1736 թթ.) հայերի, վրացիների, ադրբեջանցիների, աֆղանների, լեզգիների և առանձնապես պարսիկների ու թուրքերի, նրանց փոխհարաբերությունների ու մղած սլատերազմների, ռուս-պարսկական հարաբերությունների և ընդհանրապես Մերձավոր Արևելքի քաղաքական իրադարձությունների պատմության ուսումնասիրության համար:

Ելնելով «Պատմության» պարունակած նյութից, շարադրանքի ոճից և նկարագրվող իրադարձություններին հեղինակի տված մեկնաբանություններից, կարելի է ենթադրել, որ նա կրթված, ռազմական գործին հմուտ աշխարհիկ անձնավորություն է եղել: Ժամանակին հայ հասարակությանը հուզող կրոնական հարցերին նա չի անդրադարձել: Հայոց կաթողիկոսը նրա մոտ հանդես է դալիս միայն քաղաքական-դիվանագիտական գործչի դերում: Նրա «Պատմությունն» աշխարհիկ բնույթի գործ է և իբրև այդպիսին հայ պատմագրության մեջ բացառիկ երկերից մեկն է:

Քաղաքական իրադարձություններին, գերազանցապես պատերազմներին նվիրված այս երկը սկսվում է աֆղանների դեպի Պարսկաստան կատարած արշավանքի պատմությամբ և ավարտվում է Մուղանի դաշտում Թահմազ կուլի խանի—Նադիրի թագադրության և Թուրքիայի հետ հաշտություն կնքելու դեպքերի նկարագրությամբ:

⁹ Նույն տեղում, էջ 99 (ընդգծումը մերն է—Լ. Բ.):

¹⁰ Նույն տեղում:

Եթե Երեանցու պարսկական, աֆլանա-թուրքական և պարսկա-թուրքական հարաբերութիւնները և դրանց առնչութեամբ Նադիր խանի ծավալած դործունեութիւնը Երեանցին համեմատաբար հանգամանորեն է շարադրում, ապա նշված ժամանակահատվածում բուն Հայաստանում տեղի ունեցած իրադարձութիւններին անդրադառնում է անցողակի ու շատ համառոտ ձևով: Երեանցու պատմութեան այդ բացը որոշ չափով լրացնում են նրա ժամանակակից Աբրահամ Կրետացի կաթողիկոսը և Նադիրի պալատական պատմագիրներ Մուհամմադ-Քյազիմն ու Միրզա Մուհամմադ-Մեհդի խան Աստարաբադին: Վերջին երկուսի, մասամբ և Կրետացու հաղորդած տեղեկութիւնները Նադիրի մասին, սակայն, պետք է մեծ վերապահութեամբ օգտագործել, քանի որ դրանք, Կրետացու իսկ խոսքերով ասած, մեծ մասամբ «շողորթեալ» պատմութիւններ են, ուր հակառակ ժամանակակից բաղմամբիվ հիշատակարանների գրիչների և հատկապես Աբրահամ Երեանցու վկայութիւնների, իդեալականացված է Արեւելի այդ փառամոլ բռնակալը: Ինքնին հասկանալի է, որ այդ «շողորթեալ» պատմութիւնները չեն կարող ճիշտ պատկերացում տալ պատմական իրողութիւնների մասին: Թե ինչպես են պալատական պատմագիրները ներկայացրել Նադիրի ժամանակաշրջանի իրադարձութիւնները, նշենք միայն երկու փաստ: Հայտնի է, որ XVIII դարի 20-ական թթ. հայ ամենանշանավոր ռազմական գործիչը Դավիթ-Բեկն էր: Այդ ժամանակաշրջանի և ոչ մի աղբյուր չի հիշատակում Դիզակի Մելիք Եգանին. նա ավելի հայտնի է դարձել 30-ական թթ. սկզբին, այն էլ ոչ որպէս հայ ազատագրական շարժման գործիչ, այլ իբրև վերակենդանացող Իրանին հպատակ հայ աշխարհիկ իշխող վերնախավի ռազմաքաղաքական ներկայացուցիչ, որն իր ծառայութիւններն է մատուցել Նադիրին՝ օսմանցիներին դեմ պատերազմներում և, հասկանալի է, մեծարվել է նրա կողմից: Երեանցու մի վկայութեան համաձայն, Դավիթ-Բեկ անունով մի հայ իշխան (պարսիկ մեծամեծների հետ Թահմազ Բ շահին խորհուրդ է տվել զգուշանալ Թահմազ խանից: «Դարձեալ շահ Թահմազն ունէր մեծ մեծ իշխաններ: Թահմազ խանն դեռ չեկած ժամանակն, շահին ասացին թէ՛ «...Թահմազ խանն որ գալիս այ, մենք լսել ենք որ զը գայ, քեզ զը բռնայ գտընայ երկաթի մէջ, քո թաքայորութիւնն կը կորուցանէ»: Թաքայորս ոչ հավատաց: Գ (=Տ) յավուր անցնելոյ, յետ, մին Դավիդ բէք կասեն, որ էր քրիստոնայ, որ թաքայորի մին մեծ իշխան է կամ թե խան... Այս Դավիթս գիշերն եկ դաքայորի տունն ծածկաբար, գնաց դաքայորին մոտ, ասաց... թէ՛ «Թաքայորն ողջ լինի, Թահմազ խանն քեզ ներհաք այ, քեզ զը բռնայ, քոյ թաքայորութիւնն կը տիրայ»: Թաքայորն որ լսեց էս բանս, ոչ քուն եղավ. գիշերն լուսացավ, շուտով իւր իշխաններն խնդրեց, եկին ի դուռն թաքայորի, ԻԳՌ (23000) զօրք» (էջ 64):

Պատմագրի այս վկայութիւնը հիմք է տալիս ենթադրելու, որ Սյունիքի և սղնախների ազատագրական շարժման առաջնորդները բարյացակամ չեն եղել պարսից զահի հավակնորդ Նադիրի նկատմամբ: Թերևս դրանով է բացատրվում այն, որ ժամանակի նշված հայ և պարսկալեզու աղբյուրներն ակնարկ անգամ չեն արել հայ ժողովրդի մղած հերոսամարտերի և նրա առաջնորդների մասին: Նրանք գիտակցաբար լռութեան են մատնել Դավիթ-Բեկին ու նրա հետ կապված իրադարձութիւնները, որպէսզի չգրգռեն Նադիր շահին: Նկատենք, որ

պարսից շահը, ինչպես վկայում է Ստեփանոս Շահումյանը¹¹, լսելով Դավիթ-Բեկի՝ օսմանցիների դեմ տարած հաղթանակների մասին, հրովարտակ էր ուղարկել նրան:

Այդ պայմաններում շահ Թահմազի դեմ ամեն մի ոտնձգություն կվնասեր հայերի ձեռք բերած հաղթանակին և թուրքերի դեմ հայ-պարսկական համատեղ պայքարին: Խորաթափանց Դավիթ-Բեկը, հետագայում նաև նրա զինակիցները, հավանաբար, հասկացել էին Նադիրի հեռուն գնացող նպատակները և պարզ է, որ չէին կարող բարյացակամ լինել նրա նկատմամբ: Ուստի պատահական չէ, որ պատմագիր Մուհամմադ-Քյազիմը մեծարում է ոչ թե Դավիթ-Բեկին, կամ Մխիթար սպարապետին ու Ավան Յուզբաշուն, այլ Նադիրին՝ հպատակություն հայտնած Դիզակի Մելիք Եգանին: Նա բազմիցս հիշատակում է նրան որպես նուրբ քաղաքագետին հատուկ արտակարգ ընդունակություններով օժտված իմաստուն մի գործչի, որը Նադիրի կողմից մեծ սիրո և վստահության էր արժանացել: Ավելին, Քյազիմը, նկարագրելով Անդրկովկասի 1723 թ. վիճակը, հայ զինվորության առաջնորդների մեջ առաջին տեղը հատկացնում է Մելիք Եգանին¹²:

Մինչդեռ Եգանը իբրև քաղաքական-ռազմական գործիչ հայտնի է դարձել Նադիրի Հայաստան մուտք գործելուց հետո. Աբրահամ Երևանցին նրա անունը չի հիշատակում, Կրետացին նշում է միայն, որ Մելիք Եգանը (նրա մոտ՝ էկէնն—լ. Բ.) մասնակցել է Մուղանում Նադիրի թագադրման արարողություններին: Պատահական չէ, որ Նադիրին հպատակություն հայտնած և նրա մոտ ծառայության մտած հայ մեծամեծների շարքում աղբյուրները չեն հիշատակում Սյունիքի և սղնախների ազատագրական շարժման կենդանի մնացած առաջնորդներից և ոչ մեկին:

Պատահական չէ նաև, որ Նադիրը միայն Սյունիքի Աբխանվերդի իշխանին է պատժում: Երևանցին գրում է. «Յետոյ Սիուն խանն, որ է անուն անվանի Աբֆան Վէրդի խան, ուզեց զնա ըսպանել: Մեծայմեծը ոչ թողին ըսպանելու, ԳՌ (= 3.000) թուման առավ, ոչ ըսպանեց: Մանավանդ պատճառն ի՞նչ է սորայ ըսպանելու, այս է պատճառն որ ասում. «Օսմանցին որ եկ մ'երկիրն յէ՞ր չը կռիվ արիք, քան ըսերկիրն տվիք օսմանցուն, դուք եղաք խան, երկիրն քանդեցիք եւ ավերեցիք: Այս էր պատճառը» (էջ 58):

Պատմագիր Աբրահամ Երևանցին Սեֆյան հարստության անկման պատճառը համարում է աֆղանների ապստամբությունը և իր «Պատմությունն» էլ հենց սկսում է դրանով: Նշում է, որ 1721 թ. աֆղանների Միր-Մահմուդ շահը գրավել է Սպահան քաղաքը. «Հրայման ետ զօրքին՝ մտան ի քաղաքն, սուր քաշեց, յամենեքեան մեծայմեծ եւ իշխանք ըմբռնեց, շահ Յուսէն ըսպանեցին Ե (= 5) որդին. մին որդի թաքուցեալ էր եւ փախեալ» (էջ 21): Հուսէին շահի փախած որդին՝ Թահմազը, ժառանգելով հոր գահը (Թահմազ Բ), Թավրիզում զորք է հավաքում ու կռիվ մղում աֆղանների դեմ: Սպահանի մոտ պարտություն կրելով աֆղաններից, դիմում է վրաց Վախթանգ թագավորին, «Իմ հայրս աղվան ըսպանեց, թախտն, ես մնացի անտէր, պիտի որ գաս գնաս» (աֆղանների դեմ կռվելու—լ. Բ.) (էջ 22): Վախթանգը հրաժարվում է գնալ, պատճառաբանելով, որ իր դեմ օսմանցիները պատերազմ են սկսել: Շահի հրամա-

¹¹ «Ընտիր պատմություն», Վաղարշապատ, 1871, էջ 58—59:

¹² Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. 4, Երևան, 1972, էջ 181:

նով, մահմեդականութիւն ընդունած վրացի Մահմադ կուլի խանն իր զորքով հարձակվում է Վախթանգի վրա, սակայն պարտվում է ու դիմում լեզգիների օգնությանը:

Երևանցին այնուհետև նկարագրում է Վրաստանում տեղի ունեցած իրադարձութիւնները, վրաց կաթողիկոսի դավաճանութիւնը, Վախթանգի ու նրա ընտանիքի Մոսկվա գնալը, նրա Շահնավազ որդու փախուստը Էրզրում, հետո Մոսկվա, օսմանցիների կողմից Թիֆլիսի, ապա Կարբի գյուղի գրավումը և 1724 թ. Երևանի պաշարումը (էջ 22—26):

Պատմագիրը ասում է, թե կարբեցիները պաշտպանական միջոցներ են ձեռնարկել ու մինչև թուրքական հիմնական բանակի ժամանումը, 40 օր կռվել են գյուղը պաշարող զորամասի դեմ: Դրանից հետո թուրքական բանակի գլխավոր հրամանատար Աբդուլլա փաշան կարբեցիների մոտ մարդ է ուղարկել, պահանջել հպատակվել, խոստանալով ձեռք չտալ գյուղին ու չգերեվարել բնակիչներին: Երևանցին թվարկում է կարբեցիների ինքնապաշտպանութիւնը կազմակերպողների անունները, ասում է, թե նրանք փաշայից 10 օր ժամանակ են խնդրել պատասխան տալու համար. միաժամանակ նրանք «...մարդ ղրկեցին Երեւան Միհրաբի խանին, թե «Օսմանցին մեզ յաղթում այ, մենք էսպէս խօսք ենք արել մինչ ի ժ (=10) օրն, քեզ մարդ ենք ղրկել, ինչ որ դուն կասես մենք էնպէս կանենք»: Միհրաբի խանըն դաբուլ շարավ թե բարութ կը ղըրկեմ, դոմբարայ կըրկեմ, կռիվ արէք, մինչև Աստուածատուր կաթողիկոսն գնացել այ շահ Թամազին մօտ, տեսնեն ինչ խաբար կայ» (էջ 24): Տասն օր անցնելուց հետո, կարբեցիները հարկադրված զինաթափ են լինում ու հանձնվում:

Երևանցին հանգամանալից նկարագրում է պաշարված Երևանի ծանր ու օրհասական վիճակը, հայերի՝ ինքնապաշտպանական միջոցառումները, նըշում է նրանց ու Երևանում բնակվող բոշաների (որոնք հայերի հետ խիզախորեն մարտնչել են թշնամու դեմ) դեկավարների անունները, ապա՝ քաղաքի թաղամասերում ծավալված պաշտպանական համառ ու անձնազոհ կռիվները, թուրքական բանակի համալրումները, կռվող կողմերի մարդկային կորուստները:

Երևանի գրավումից հետո, պատմագիրը, ավելորդ մանրամասնութիւններով նկարագրում է խոյի, Մարանդի, Թավրիզի համար մղված մարտերը օսմանցիների ու պարսիկների միջև, ապա Նադիրի մղած կռիվները: Այնուհետև տալիս է շահ Թահմազի դեմ Նադիրի դավադրութիւնը, շահին գահընկեց անելը, պարսկական գահի հավակնորդ Նադիրի՝ իր նպատակն իրականացնելու համար ծավալած գործունեութիւնը: Վերջում նկարագրում է Երևանի գրավումը, որից հետո՝ Մուղանի դաշտում Նադիրին իրանի շահ հռչակելը:

Հայ պատմագիրներից և ոչ մեկը պատերազմները, բանակների տեղաշարժերը, արշավանքները, անցած ուղիները, քաղաքների ու բերդերի պաշարումն ու գրավումը, զորամիավորումների մարտական ուժերի ու զենքերի տեսակների քանակական տվյալները, զորավարների կիրառած տակտիկան ու ստրատեգիան այնքան մանրամասն չի նկարագրել, ինչպես այդ արել է Աբրահամ Երևանցին: Փաստորեն նա պատերազմների պատմության պատմագիր է, ինչը և հանդիսանում է նրա՝ իբրև պատմագրի առանձնահատուկ կողմը:

Յուլյց տալու համար, թե Երևանցին ինչպիսի մանրամասնութիւններով է նկարագրում ռազմական անցքերը, բերենք միայն երկու օրինակ: Թուրքական

մեծաքանակ բանակը Ահմադ փաշայի հրամանատարությունը շարժվում է դեպի Համադան. «...եկին հասին Սայհնայ, Սայնու չետ վեր կացի, գնացին Քանգայվար, Քանգայվարու գնացի Մուշբուլաղ, որ մին յախբուր այ նորայ դուս եկել, քանզի շատ ջուր այ դուս գալիս էս յախբուրէս վերաս: Վեր եկին այս հզորքս փաշի, տեղէս վեր կացին, գնացի Սուղուր, ... Սուղուրու վեր կացին գնացի Թաժլիք, Թաժլիքու վեր կացին՝ գնացի Թարջիլ, Թարջիլու վեր կացի գնացի Սատայվայ...» (էջ 46): Եվ այսպես շարունակ:

Խոսելով Հասան փաշայի հավաքագրած զորքի մասին, գրում է. «Ղրկեց բաջիլան, որ մին ասկա, որ բաջիլան կասեն, էմ (=7000) բաջիլան քուրդ, բովանդակ հրկաթ հագած... ղրկեց մառնանի արաբ կասեն, էմ (=8000) էլ տեղէն եկավ: Աբդիլավանդ կասեն, էն էլ մին ազգայ, 14.000 հզորք տեղէն եկավ: 9.000 էլ ենկիշարի, 6.000 ջաբաջի... 4.000 քուրդ ի Զանկանայ, 1.800 ջահ կասեն, խզըլայ ասկէն այ: Ղարայ-Չոբան կասեն, որ էլ քուրդայ, 800 էլ տեղէն եկավ: Տարենայ բէկ կասեն, որ Զաղովայ... 1.600 տեղէն եկավ, որ եղավ վերջայպէս 43.400 հզոր» (էջ 39):

Երևանցին Թահմազ կուլի խանի ծավալած պատերազմական գործողությունների նկարագրությունն սկսում է Շիրազում աֆղանների դեմ նրա մղած մարտերով, առանց, սակայն, որևէ տեղեկություն հայտնելու, թե ո՞վ է եղել նա, ինչպես է ասպարեզ եկել, ինչ փոխհարաբերության մեջ է եղել Սեֆյան արքունիքի հետ: Միայն բավարարվում է ասելով, թե երբ շահ Թահմազը իմացել է Թահմազ կուլի խանի Սպահան գալու մասին, «մարդ ղրկեց Թահմազին թէ՛ «լօռն (պետք է ենթադրել «Զօրքը» — Լ. Բ.) Բախտիարին ղօրայցել այ, մեր գեղերն մեր գերայվարում այ զնաս նորա վերայ» (էջ 53):

Պատմագիրը հմտալից ձևով բացահայտում է Թահմազ խանի հաղթանակների պատճառները, նշում է, հատկապես, երկու կարևոր հանգամանք, նախ՝ նրա ռազմավարական բարձր տակտիկան, զորքերի արագաշարժությունը, մարտավարական արագ, անսպասելի գործողություններ ծավալելը և երկրորդ՝ թշնամիների անմիաբանությունն ու անմիասնությունը (էջ 53, 56, 58—60, 62—69 և հտ.):

Ինչպես վկայում է Երևանցին, արևելքի նոր բռնակալը իր փառքի ճանապարհը հարդարում էր ոչ միայն զենքով, այլև խորամանկ շողոքորթություններ: Բաղդադի մոտ գտնվող մահմեդականների հոգևոր կենտրոնի՝ Հիմամ-Ֆեյզի հոգևորականներին՝ «մեծ մեծ կարդացողներին» սիրաշահելու նպատակով, երբ ժամանել է այնտեղ, նվերներ է տվել ու պատվել նրանց: Վերջիններս տեսնելով այդ, նամակով դիմել են հոգևոր մյուս կենտրոնների շեյխերին, թե հրեադանդվեցեք Թահմազ խանին, քանի որ նա լավ պատվի է արժանացնում ու լավ է նայում հնազանդվողներին (էջ 71): Երևանցու այս վկայությունը մեծ չափով օգնում է ճիշտ հասկանալու նաև հայոց կաթողիկոսի և հոգևոր վերնախավի նկատմամբ նադիրի ցուցաբերած բարյացակամ վերաբերմունքի պատճառը, որի մասին որոշակի գրել է այդ վերաբերմունքը վայելած Աբրահամ Կրետացի կաթողիկոս-պատմագիրը:

Երևանցին նկարագրում է Թահմազ խանի կողմից Բաղդադի Զամսյա պաշարումը, թուրքական Կադ Օսման փաշայի զորքի կողմից նրա բանակի ջախջախումը, փախուստը Համադան, ապա 15-հազարանոց բանակով հանկարծակի հարձակումը Օսման փաշայի զորքի վրա, թուրքերի շարաշար պար-

տութիւնը, Օսմանի գլխատումը, Բաղդադի Ահմադ փաշայի հետ հաշտության կնքումը: Հետո տալիս է Թահմազ խանի կողմից Շիրազի Մահմադ խանի ապստամբության ճնշումը, Երևանի, Գանձակի, Շիրվանի գրավումը, լեզգիներին հարկատու դարձնելը, Մցխեթ քաղաքը գնալը, վրաց իշխաններին սլար-դեններ ու պատիվներ տալը, կախեթցիների ապստամբությունն ու հերոսական դիմադրությունը և նրանց կողմից Թահմազի պարտութիւնը (էջ 79—84): Այդ պարտութիւնից հետո, Երևանցու վկայութեամբ, Թահմազ խանը դալիս է Երեւ-վան և պատրաստվում է ճակատամարտ տալ Քյոփրուղադե Աբդուլա փաշայի 300-հազարանոց բանակի դեմ: Ըստ Երևանցու, վճռական ճակատամարտը տեղի է ունեցել Եղվարդի մոտ: Թվական գերակշռութիւնն ունեցող օսման-յան բանակը գլխովին ջախջախվել է Մոսկերտի մոտ, Աբդուլա փաշան բռնվել ու սպանվել է: «Օսմանցին յախտվեց,— դրում է պատմագիրը,— օսմանցի որ էս ճանաչալարհիս վերայ թաքաց, նման այ լաշ լաշի վերայ, մարդ ոչ կարէր ճանաչալարօվն գնայ, լաշերն կոխ տալօվ: Ընկանց ոտի տակն ամէն լաշ: հայում ես, լաշ այ երեւելի, այլ գետին կամ քար ոչ է երեւում, որ այսպէս լաշ այ» (էջ 85):

«Պատմութիւն պատերազմացն» երկն ավարտվում է Մուղանի (Տամղան) իրադարձութիւնների նկարագրութեամբ, ուր նադիրն իրականացնում է իր վերջնական նպատակը՝ իրեն հռչակում է Իրանի շահ: Երևանցին գրում է, թե նա Մուղան է հրավիրել Պարսկաստանի մեծամեծներին ու դիմել նրանց, թե «գիտ ձեզ ինչ պատճառի խնդրեցի, ասաց, քանի ժամանակ այ որ թուր եմ տալիս ձեր խաթեր հմար մինչ ի էս թարիղս, ձեր դուռնան հատացրի, աղ-վանն, օսմանցին, մօսկօվն բօվանդակ փախցր կօտորեցի, պրծայ: Հիմայ ձեզ-մէն շայհ դրէք»: Երեք անգամ ասաց աս խօսքս: Մին երկու մեծ իշխան ըսկսեց թէ «Խանն ողջ լինի, շայ Թահմազն բեր դիր իւր թախտն, էլ մեր թագավորն նա լինի»: Շուտով հրայման ետ, ըսպանեցին այս մի քանի իշխանիս: Յետոյ կըր-կին անգամ հարցուց. բօվանդակ վախեցան, ասացին. «Խանն ողջ լինի, դու ես մեր դաքայորն»: Երեք անգամ որ այսպէս ասին «Դու ես մեր թաքայորն», Թահմազն ասաց. «Ինձ եք ուզում թաքայոր, գիր տվէք որ ես ձեզ թաքայոր դաբիլ լինեմ»: Բերին ժողովուրդն գիր տվին թե «Դու ես մեր թաքայորն, էլ քեզն է ավել թաքայոր շունենք, դու ես մեր թաքայորն»: Գիրն տվին, ուրախու-թիւն արին, պոծան, եղավ թաքայորն» (էջ 86): «Վերջ ամէն» բառերից հետո այդ նույնը, որոշ մանրամասներով ու փոփոխութիւններով, կրկնում է:

Պետք է ենթադրել, որ «Վերջ ամէն»-ից հետո, որով ավարտել էր իր երկը, Երևանցին նոր նյութեր է ձեռք բերել և աշխատել է ամբողջացնել իր գործը: «Կայսր» բառի գործածելը թերևս ենթադրել է տալիս, որ հեղինակը այդ հատ-վածը գրել է Արևմտյան Հայաստանում կամ Հունաստանում, որտեղ ավան-դաբար պահպանվել է տիրակալների այդ տիտղոսը, կամ էլ ուրիշն է դրել-լրացրել:

Արրահամ Երևանցի պատմագիրը որոշ տեղեկութիւններ է հաղորդում XVIII դարի 20—30-ական թթ. ռուս-պարսկական հարաբերութիւնների մա-սին: Գրում է, թե շահ Թահմազը ժառանգելով հոր գահը, դիմել է սուլթան Ահմադին պահանջելով՝ «Իմ երկիրն ինձ տուր, մինչ ի էս թարիղս աղվանն իմ երկիրն տիրել էր, հիմայ Աստուած տվեց իմ երկիրն աղվանի ձեռնէն—արդ խնդրեմ քեզն է որ իմ երկիրն ինձ տաս, որ իմ հօր օջախն խավարի ոչ»: Սուլ-թանը նրան գրել է, թե «Լավ ես ասում, մօսկօվն Գիլանու դուս արայ, ես էլ իմ

առաց երկիրն քեզ տամ գնայ տիրէ»։ Շահն այդ մասին հայտնել է Մոսկվա և պահանջել Գիլանը։ Մոսկվան պատասխանել է, թե «Գիլանի համար Ռուսաստանը հսկայական ծախսեր է կատարել ու մեծ զոհեր տվել, դրա համար պահանջել է 80 հազար թուման և նույն գումարը տալ հետագա տարիներին։ Երեւանը գրում է, որ շահը համաձայնվել է և «...շահն Մոսկոսկին հետ լավ հաշտ եղան, ինչ որ եխպայր» (էջ 79)։

Աբրահամ Երևանցին ևս, Առաքել Դավրիժեցու և Աբրահամ Կրետացունման, հարգանքով է խոսում հայ առևտրավաշխառական կապիտալի ներկայացուցիչների մասին։ Գոհունակությամբ արձանագրում է, որ Ահմադ փաշայի կողմից Համադանի գրավման ժամանակ, նրա բանակում գտնվող համադանցի հայ վեց «մեծ իշխաններ» (հուլանաբար առևտրականներ-մահտեսիներ—Լ. Բ.) դիմել են փաշային, թե «մենք քրիստոնեայ ենք. խարջ կտանք քեզ, մեր գերիքն հրամայէ որ մեզ յետ տան...»։ Երևանցին ասում է, որ փաշան համաձայնվել է, սակայն ոչ բոլորին են ազատել, մի մասին բաց չեն թողել (էջ 84)։

Անդրկովկասում 1734—1736 թթ. Նադիրի ժավալած գործունեությունը, Մուղանում նրա թագադրման և բայրամի տոնակատարության արարողությունները շատ ավելի հանգամանորեն է տվել Աբրահամ Կրետացին։ Այստեղ նշել ենք միայն, որ եթե մի կողմ թողնենք նրա մոտ մանրամասնությունները և «շողոքորթեալ» պատմությունները, ապա նա ընդհանուր գծերով հաստատում է Երևանցու հաղորդած տեղեկությունները այդ ժամանակահատվածում տեղի ունեցած իրադարձությունների մասին։ Կրետացու մոտ, սակայն, ոչինչ չի ասված, որ Նադիրի ընտրության հարցում տարակարծություններ են եղել, նա միայն ակնարկում է, որ երբ ինքն էլ է հրավեր ստացել ներկայանալու Մուղան, շատ է զարմացել և ցանկացել է իմանալ կանչելու պատճառը. «Բայց կարծիք ունեց, — գրում է նա, — թէ՛ զՇահն նստուցանելոց է ի դահոյա իւր, և ոմանք, թէ՛ ինքն նստելոց է. բայց հաւաստին և վասն էրն ոչ է յայտնի»¹³։

Երևանցու և Կրետացու հաղորդած տեղեկությունների պատմական արժեքը գնահատելիս չպետք է մոռանալ այն կարևոր հանգամանքը, որ նրանք իրենց պատմությունները գրել են ելակետ ունենալով տարբեր նպատակադրումներ։ Առաջինը, տալով Պարսկաստանի մղած 15-ամյա պատերազմների պատմությունը, նպատակ է հետապնդել գրելու արևելքի նոր բռնակալ Նադիրի պատերազմական գործողությունների մասին, երկրորդը՝ Նադիրի և հայոց կաթողիկոսության փոխհարաբերությունների մասին։

Աբրահամ Երևանցու «Պատմութիւն պատերազմացն» երկի թե՛ ինքնագիրը և թե՛ խմբագրված բնագիրը, ճիշտ է, փոքրածավալ է, սակայն ինչպես արդեն նկատեցինք, հետաքրքիր ու արժեքավոր նյութ է պարունակում Իրանի, Թուրքիայի և Անդրկովկասի երկրների XVIII դարի 20—30-ական թթ. քաղաքական բուռն իրադարձություններով հարուստ ժամանակահատվածի պատմության ուսումնասիրության համար։ Այն ականատեսի թողած ստուգաստույտում աղբյուր է։

¹³ Աբրահամ Կրետացի, Պատմագրութիւն անցիցն իւրոց և Նատր-Շահին պարսից, Վաղարշապատ, 1870, էջ 27։

«ИСТОРИЯ» АБРААМА ЕРЕВАНЦИ

Доктор историч. наук Л. О. БАБАЯН

(Резюме)

«История войн 1721—1736 гг.» Абраама Ереванци является достоверным и важным источником для изучения истории войн между Ираном и османской Турцией за завоевание исторической Армении, Атрпатакана и Ирака. В ней подробно описан захват Еревана, Тавриза, Амадана и других городов и крепостей Надир-шахом. Надир-шах охарактеризован как умелый полководец, быстро ориентирующийся в конкретных условиях. Однако Ереванци отрицательно отзывается о Надире как о коварном военно-политическом деятеле, пишет о его измене шаху Тахмаспу, об уничтожении династии Сефевидов, насильственном захвате иранского престола. В «Истории войн» сообщаются некоторые данные об ирано-русских отношениях в 30-х годах XVIII в., интересные сведения о взаимоотношениях иранского шаха и султана османской Турции с армянским католикосом. В статье подчеркивается, что ранее опубликованный текст был издан не на основе рукописи самого Ереванци, а на основе тщательно переработанного и отредактированного в середине XVIII в. текста. Оригинал рукописи Ереванци был найден в собрании рукописей венецианских Мхитаристов и опубликован в 1977 г.